ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 13 և 13/1,
հեռ. (+374 12) 22 22 22, ֆաքս(+374 10) 59 05 82
էլ. փոստ՝ ashb@ardshinbank.am
կայք՝ www.ardshinbank.am

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով գումարելու մասին Բանկի Խորհրդի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 10/19-03 Լ որոշում: («ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):

Ardshinbank

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2019 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 10/19-03 Լ

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ Գրիգորի Բաբաջանյանի 03.09.2019 թվականի դիմումը իր լիազորությունները վաղաժամ դադարեցնելու վերաբերյալ, անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի հատուկ նիստի (Մրցութային արդյունքների մասին) 2019 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 2 արձանագրությունը, Խորհրդին կից Աուդիտի և ռիսկերի կոմիտեի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի ««Արդշինբանկ» ՓԲԸ արտաքին աուդիտ իրականացնող անձի թեկնածուի և վերջինիս վճարման չափի սահմանման վերաբերյալ «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդին առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ» թիվ 98-2 որոշումը, ղեկավարվելով «Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրության 31.1 կետի 2-րդ ենթակետով, «Բաժնետերերի ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման կարգի» 7.4.1 կետով, և «Խորհրդի կանոնակարգի» 7.10 կետով՝ «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհուրդը

որոշում է՝

1. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը գումարել 2019 թվականի նոյեմբերի 8-ին ժ. 11:00 ք.Երևան, Գր.Լուսավորչի 13, 6-րդ հարկ հասցեում:
2. Հաստատել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի հետևյալ օրակարգը.
   1) Գրիգորի Բաբաջանյանի՝ որպես «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցումը,
   2) «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի՝ որպես «Արդշինբանկ» ՓԲԸ 2019 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպության հաստատումը:
3. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2019 թվականի հոկտեմբերի 24-ի դրությամբ:
4. Բաժնետերերին ժողով գումարելու մասին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով կամ հանձնել առձեռն:
5. Բաժնետերերի արտահերթ ընդհանուր Ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրել Գրիգորի Բաբաջանյանի լիազորությունները վաղաժամ դադարեցման վերաբերյալ իր 03.09.2019 թվականի դիմումի, սույն որոշման, «Արդշինբանկ» ՓԲԸ անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցութային հանձնաժողովի հատուկ նիստի (Մրցութային արդյունքների մասին) 2019 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 2 արձանագրության, Խորհրդին կից Աուդիտի և ռիսկերի կոմիտեի 2019 թվականի սեպտեմբերի 3-

ի ««Արդշինբանկ» ՓԲԸ արտաքին աուդիտ իրականացնող անձի թեկնածուի և վերջինիս վճարման չափի սահմանման վերաբերյալ «Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդին առաջարկություններ ներկայացնելու վերաբերյալ» թիվ 98-2 որոշման պատճենները:

6. Սահմանել, որ նյութերին ծանոթանալու համար բաժնետերերը կարող են դիմել Խորհրդի աշխատակազմ՝ ք.Երևան, Գր. Լուսավորչի 13 հասցեով:

7. Հանձնարարել Իրավաբանական ծառայությանը սահմանված ժամկետներում ապահովել «Արդշինբանկ» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցումը ՀՀ կենտրոնական բանկին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԿԱՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ**

Ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 23-ին, ք.Երևան